

Դասընթացի անվանումը (կրթամոդուլի դասիչը)	ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ (6ՇԻԿ022, 6ՇԻԿ022Ա)
ECTS կրեդիտ	3+1 կրեդիտ
Դասընթացի պատասխանատու դասախոս	Կարապետյան Լ. Գ., տ. գ. թ., դոցենտ
Ուսումնառության վերջնարդյունքներ	<p>Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <p><i>(գիտելիք և հմացություն)</i></p> <ul style="list-style-type: none"> • քննարկել երկրաշարժերի, երկրաշարժերը գրանցող գործիքների աշխատանքի սկզբունքները, • բացատրել սեյսմիկ գոտիավորման (շրջանավորման) քարտեզները, ինչպես նաև սեյսմիկ ազդեցությունների դեպքում շենքերի և կառույցների հաշվարկի հիմունքները, • նկարագրել սեյսմիկ շրջանները, ՀՀ-ի տարածքը, շենքերի և շինությունների նախագծման սկզբունքները, • կատարել տարբեր շինարարական նյութերով և կոնստրուկտիվ համակարգերով շենքերի կոնստրուկցիաների հաշվարկ և կոնստրուկտավորում: <p><i>(կարողություններ)</i></p> <ul style="list-style-type: none"> • ընտրել և վերլուծել շենքերի և շինությունների համար կոնստրուկտիվ կրող համակարգերը, ինչպես նաև նշանակել կրող տարրերի լայնական չափսերը՝ հաշվի առնելով գրունտային պայմանները, • որոշել երկրաշարժերի բնութագրերը, սեյսմիկ ուժգնությունը, • տարբերել սեյսմիկ ալիքների տեսակները և դրանց տարածման արագությունները և սեյսմիկ բեռնվածքները՝ համաձայն ՀՀՇՆ II-2.02-2006-ի գործող նորմերի, • հաշվարկել և կոնստրուկտավորել առաջադրված շենքերը և շինությունները՝ օգտվելով շինարարական նորմատիվային փաստաթղթերից:
Դասընթացի թեմատիկ ծրագիր	<ul style="list-style-type: none"> • Երկրաշարժի տեսակները՝ տեկտոնական, փլվածքային և հրաբխային: Սեյսմիկ գոտիները: • Երկրաշարժերի բնութագրերը: Սեյսմիկ ալիքների տեսակները և նրանց տարածման արագությունները:

	<ul style="list-style-type: none"> • Երկրաշարժերը գրանցող գործիքներ: Գրանցման տեսակները: • Երկրաշարժերը գրանցող սեյսմոլոգիական և ինժեներասեյսմոլոգիական կայաններ: • Երկրաշարժերի ուժգնության որոշումը: • Ուժեղ երկրաշարժերի հակիրճ նկարագրումը: Սեյսմիկ շրջանավորում և միկրոշրջանավորում: • Երկրաբանական, սեյսմոլոգիական և ինժեներասեյսմոլոգիական հետազոտություններ՝ սեյսմիկ շրջանավորման քարտեզներ ստանալու համար: • Բնակավայրերի սեյսմակայունությունը: • Սեյսմիկ բեռնվածքների որոշումը համաձայն ՀՀՇՆ II-2.02-2006: • Շենքերի և կառուցվածքների սեյսմակայուն կոնստրուկցիաները:
Դասընթացի գրականության ցանկ	<ul style="list-style-type: none"> • ՀՀՇՆ II-2.02-2006, Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր, Երևան, 2006թ.: • Խաչիյան Է. Ե. Կիրառական երկրաշարժագիտություն, ՀՀ ԳԱԱ Գիտություն, Երևան, 2001 թ.: • Կարապետյան Բ.Կ., Ավետիսյան Ռ.Ս., Դադայան Տ.Լ., Մարտիրոսյան Հ.Ռ. Միահարկ արդյունաբերական շենքի հաշվարկը սեյսմիկ ազդեցության դեպքում, Երևան, 2001թ.: • Назаров А.Г. Метод инженерного анализа сейсмических сил, Изд-во АН, Арм ССР, Ереван, 1959г. • Поляков С.В. Последствие сильных землетрясений, Стройиздат, Москва, 1978г.

ՇԿ ամբիոնի վարիչ՝

Դադայան Տ. Լ.